ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«06» հուլիսի 2020թ. № 148

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4-Ի ԹԻՎ 39 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի թիվ 186-Ն հրամանով հաստատված՝ կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի, հաշվի առնելով, որ Սպիտակի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի կողմից տրված հողի սեփականության իրավունքի թիվ Ա 027850 պետական ակտով Աշոտ Վլադիմիրի Դանիելյանին պատկանող 06-006-0339-0016 կադաստրային ծածկագրով հողամասը մինչև համայնքում առաջին պետական գրանցման աշխատանքներ իրականացնելն Աշոտ Դանիելյանի կողմից օգտագործվել և օգտագործվում է նոր՝ կադաստրային քարտեզի ուղղման և իրավունքի պետական գրանցման համար ներկայացվող չափերով և դիրքերով, ձեռք բերման օրվանից տնօրինել, տիրապետել և օգտագործվել է որպես գյուղատնտեսական նշանակության բազմամյա տնկարկ հողատեսքի պտղատու այգի (3-րդ կարգ, հնդավոր)՝ ***որոշում եմ.***

2. Լրացումներ կատարել Սպիտակ համայնքի ղեկավարի 2019 թվականի փետրվարի 4-ի ««Ղազանչի» հանդամասում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամասի ճշգրտված հատակագիծը հաստատելու և Աշոտ Դանիելյանի սեփականության իրավունքը ճանաչելու մասին» թիվ 39 որոշման մեջ.

3) որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված «բազմամյա տնկարկ հողատեսքի» բառերից հետո լրացնել «պտղատու այգի (3-րդ կարգ, հնդավոր)» բառերով,

4) որոշումը լրացնել նոր 5-րդ կետով.

«5. Սպիտակ համայնքի կադաստրային քարտեզում 1,16674 հեկտար մակերեսով հողամասի հողատեսքն ուղղել գյուղատնտեսական վարելահողից՝ բազմամյա տնկարկ հողատեսքի պտղատու այգի (3-րդ կարգի) »:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հուլիսի 6
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«06» հուլիսի 2020թ. № 139

## ԱՆՉԱՓԱՀԱՍ ԱՆԱՀԻՏ ՍԱՐԳՍԻ ԱՂՈՒՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության 9-րդ կետի 4-րդ ենթակետի «գ» պարբերությամբ, հիմք ընդունելով Նինել Ալբերտի Խումարյանի դիմումն անչափահաս դստեր՝ Անահիտ Սարգսի Աղումյանին պատկանող անշարժ գույքն օտարելու մասին, Սպիտակի համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2020 թվականի հուլիսի 6-ի եզրակացությունը՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել օտարել Նինել Ալբերտի Խումարյանին, Սարգիս Ռուբենի Աղումյանին, Ալիկ Սարգսի Աղումյանին, Սոս Սարգսի Աղումյանին և Անահիտ Սարգսի Աղումյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Վարպետաց թաղամաս, Երիտասարդության փողոց, 3 փակուղի, թիվ 7 հասցեի բնակելի տունը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 16092016-06-0014)՝ անչափահաս Անահիտ Սարգսի Աղումյանի մասով:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հուլիսի 6
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«06» հուլիսի 2020թ. № 180

## ԱՇՈՏ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1131180 վկայականը և Աշոտ Վլադիմիրի Դանիելյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Աշոտ Վլադիմիրի Դանիելյանին պատկանող՝ Սպիտակ համայնքի Ս.Ավետիսյան փողոցի վրա գտնվող 0,042 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 149,5 քառակուսի մետր մակերեսով խանութ տաղավարին տրամադրել «քաղաք Սպիտակ, Ս.Ավետիսյան փողոց, թիվ 388» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հուլիսի 6
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«08» հուլիսի 2020թ. № 181

## ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 197 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 197 որոշման մեջ Զվարդ Վաղինակի Պողոսյանի անունը սխալմամբ գրվել է «Զվարթ», հիմք ընդունելով Զվարդ Վաղինակի Պողոսյանի դիմումը և անձնագրային տվյալները՝ *որոշում եմ.*

1.Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի դեկտեմբերի 14-ի «Սպիտակ քաղաքի Ս. Ավետիսյան, Առափնյա, Պանրագործների, Թումանյան և Բանավան փողոցների բնակիչների տնամերձ հողամասերը և բնակելի տները՝ որպես վերջիններիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 197 որոշման կից ցուցակի 175-րդ տողում նշված «Զվարթ» բառը փոխարինել «Զվարդ» բառով:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հուլիսի 8
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«08» հուլիսի 2020թ. № 132

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի բնակիչների դիմումները և սոցիալական հարցերի հանձնաժողովի 2020 թվականի հուլիսի 7-ի թիվ 2 արձանագրությունը՝ ***որոշում եմ***.

1. Սպիտակ համայնքի 2020 թվականի բյուջեի «Այլ սոցիալական ծրագրեր» գործառական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման 4729 հոդվածից Սպիտակ համայնքի բնակիչներին հատկացնել դրամական օգնություն ընդամենը 60 000 (վաթսուն հազար) ՀՀ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հուլիսի 8
ք.Սպիտակ

Հավելված
Սպիտակ համայնքի ղեկավարի
2020թ. հուլիսի «8» թիվ 182 որոշման

Դրամական օգնություն ստացող քաղաքացիների ցուցակ

| Հ/Հ | Անուն, ազգանուն | Սոց. քարտի համարը | Անձնագրային տվյալները | Գումարը ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|
| 1 | Աննա Դավթյան | 6601830275 | 006812150, տրված 21.04.2016թ., 052-ի կողմից | 20 000 |
| 2 | Մարինե Առաքելյան | 6504620040 | AS0368352, տրված 12.09.2018թ., 052-ի կողմից | 10 000 |
| 3 | Կարեն Ազատյան | 1709970146 | AS0508733, տրված 18.02.2019թ., 052-ի կողմից | 30 000 |

Ընդամենը՝ 60 000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ

Աշխատակազմի քարտուղար Ա. Գյուլազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«08» հուլիսի 2020թ. № 183

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 360 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով՝ որոշում եմ.

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2016 թվականի դեկտեմբերի 29-ի «Սպիտակ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցութային հանձնաժողով ստեղծելու և Սպիտակի քաղաքապետի 2015 թվականի հունիսի 26-ի թիվ 228 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 360 որոշման կատարել փոփոխություններ.

1) որոշման 1-ին կետում նշված «Արման Ավետիսյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի» բառերից հետո «պետի ժամանակավոր պաշտոնակատար» բառերը փոխարինել «պետ» բառով,

2) որոշման 1-ին կետում նշված «Գայանե Զոբանյան» բառերը փոխարինել «Գարիկ Աբգարյան» բառերով,

3) որոշման 1-ին կետից հանել «Վարդան Մանանյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի գլխավոր մասնագետ-ճարտարապետ» բառերը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հուլիսի 8
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«08» հուլիսի 2020թ. № 184

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆՈՒՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի և Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 57-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Նունե Ավետիսյանի 2020 թվականի հուլիսի 7-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Նունե Ավետիսյանին (ՀՎՀՀ 66989347) տալ «ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան փողոց 325/1» հասցեում գտնվող խանութում (հիմնական շինություն՝ 23,8 քառակուսի մետր մակերես) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն 2020 թվականի համար՝ ըստ եռամսյակների:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը ըստ եռամսյակների և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հուլիսի 8
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«08» հուլիսի 2020թ. № 185

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԻՇԽԱՆ ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆԻՆ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 57-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Իշխան Փահլևանյանի 2020 թվականի հուլիսի 7-ի հայտը՝ *որոշում եմ.*

1. Անհատ ձեռնարկատեր Իշխան Փահլևանյանին (ՀՎՀՀ 66959786) տալ «ք. Սպիտակ, Ուզբեկական թաղամաս» հասցեում գտնվող հեղուկ վառելիքի լցման կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն՝ մինչև 2020 թվականի հոկտեմբերի 7-ը ներառյալ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ տրամադրել թույլտվությունը հավաստող սահմանված ձևի փաստաթուղթ:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հուլիսի 8
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«08» հուլիսի 2020թ. № 186

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի ԹԻՎ 85 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով,«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության պարետի թիվ Ց/56-2020 ցուցումի, կորոնավիրուսային հիվանդության հետևանքով ինքնամեկուսացված անձանց համար սննդամթերք և սանիտարահիգիենիկ պարագաներ ձեռք բերելու նպատակով՝ *որոշում եմ.*

1. Սպիտակ համայնքի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 27-ի « Սպիտակ համայնքի 2020 թվականի բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունները սահմանելու մասին » թիվ 85 որոշման թիվ 2 հավելվածում կատարել փոփոխություն՝ բյուջեի «Սոցիալական հատուկ ծառայություններ » գործառական դասակարգման, «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման 4729 հոդվածով նախատեսված գումարից 250 000 ՀՀ դրամ տեղափոխել «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4267 հոդված:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հուլիսի 8
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«08» հուլիսի 2020թ. № 184

## ՋԱՆԻԲԵԿ ԳՐԻԳՈՐԻ ՄԱԳՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԴՐԱՆ ԿԻՑ ՕԺԱՆԴԱԿ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 10-րդ և 13-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով, հաշվի առնելով, որ Ջանիբեկ Գրիգորի Մագոյանին սեփականության իրավունքով պատկանող Տեր-Սիմոնյան փողոցի վրա գտնվող 0,04925 հեկտար ընդհանուր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա 2013 թվականին ինքնակամ կառուցված 101,77 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տան, 23,74 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան նկուղի, 40,56 քառակուսի ընդհանուր մետր մակերեսով մառանի, 30,26 քառակուսի ընդհանուր մակերեսով ծածկարանի և 8,3 քառակուսի մետր մակերեսով պարսպի պահպանումը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1065314 վկայականը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը,

«Տեխպրոյեկտ» ՍՊԸ եզրակացությունը և Ջանիբեկ Գրիգորի Մագոյանի դիմումը՝ ***որոշում եմ***.

1. Ջանիբեկ Գրիգորի Մագոյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Տեր-Սիմոնյան փողոցի վրա գտնվող 06-006-0446-0010 կադաստրային ծածկագրով 0,04925 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 101,77 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տունը, 23,74 քառակուսի մետր մակերեսով բնակելի տան նկուղը, 40,56 քառակուսի ընդհանուր մետր մակերեսով մառանը, 30,26 քառակուսի ընդհանուր մակերեսով ծածկարանը և 8,3 քառակուսի մետր մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Ջանիբեկ Գրիգորի Մագոյանի սեփականության իրավունքը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «ք.Սպիտակ, Տեր-Սիմոնյան փողոց, 3-րդ նրբանցք, թիվ 6» հասցեն:

4. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

5. Ջանիբեկ Գրիգորի Մագոյանին.

1)համայնքի բյուջե վճարել 235 880 ՀՀ դրամ օրինականացման վճար:

2) Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Քարտուղարության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

7. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հուլիսի ____
ք.Սպիտակ